[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
26	Հունիս	2019 թ.		A	0587263667
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
26	Հունիս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար			

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ	N 11500166513800								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834								
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ռում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակությունը)	Միավորի գինը	Ցեղ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	68109718 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
(անուն, ազգանուն)

26/06/2019 14:45:35

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

ՈՐՈՇՈՒՄ

Ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու մասին

<< 28 >> փետրվարի 2019թ.

ք.Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝ Վ.Բ.Սամվելյանս, քննարկելով վարույթումս քննվող 68109718 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությում քննվող 68109718 գործի նախաքննության ընթացքում ՀՀ-ում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմաբազայի թիվ 04436 զորամասի տանկային գումարտակի տանկային վաշտի վարորդ-մեխանիկ Անդրեյ Անդրեևիչ Ռազգիլդեևին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով այն բանի համար, որ նա 2018 թվականի դեկտեմբերի 2-ին, ժամը 07-ի սահմաններում, ալկոհոլի ազդեցության տակ, գտնվելով Գյումրի քաղաքի Մայակովսկի փողոցում և տեսնելով նույն փողոցով Շահումյան փողոց տանող ուղղությամբ քայլող Գյումրի քաղաքի Աճեմյան փողոցի 26-րդ շենքի 12-րդ բնակարանի բնակիչ, 02.12.1961 թվականին ծնված Ջուլիետտա Ստյոպայի Ղուկասյանին, հետևել է նրան: Ջուլիետտա Ստեփանյանը, խուսափելով Անդրեյ Անդրեևիչ Ռազգիլդեևից, փոխել է իր քայլերի ուղղությունը և քայլել նույն փողոցի 28-րդ և 30-րդ հասցեներում գտնվող սեփական տների ուղղությամբ, որտեղ էլ Անդրեյ Անդրեևիչ Ռազգիլդեևը, հասնելով Ջուլիետտա Ստյոպայի Ղուկասյանին, դիտավորությամբ բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա գլխին և մարմնի տարբեր մասերին՝ նրան զույգ ակնակապճային շրջանների, ստորին և վերին շրթունքների, ձախից քթի շրթունքային շրջանի, ձախից ճակատային և ակնակապճից դուրս շրջանների, աջ ազդրի վերին երրորդի դրսային մակերեսի շրջանի արյունազեղումների, դեմքի ձախ կեսի այտուցվածքի, աջից ճակատային, ձախից կզակի և ստորին շրթունքի շրջանների, ձախ կոնքազդրային հոդի շրջանի, աջ ազդրի վերին երրորդի դրսային մակերեսի քերծվածքների, ձախից ճակատային և գագաթային շրջանների սահմանի վերքի, պոլիտրավմայի, գանգուղեղային փակ վնասվածքի, կրծքավանդակի փակ վնասվածքի, տրավմատիկ շոկի, կոմայի ձևերով պատճառելով մարմնական վնասվածքներ՝ անզգուշությամբ առաջացնելով Ջուլիետտա Ստյոպայի Ղուկասյանի մահը, այն է՝ վերջինս դեպքի վայրից ստացած մարմնական վնասվածքներով <<Գյումրի շտապ բուժօգնություն ծառայություն>> ՓԲ ընկերության ավտոմեքենայով տեղափոխվել է <<Գյումրի բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերություն, որտեղ նույն օրը՝ ժամը 11:30-ին, մահացել է:

Այսպիսով, Անդրեյ Անդրեևիչ Ռազգիլդեևը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար:

2018թ. դեկտեմբերի 21-ին գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարին՝ խնդրելով հանձնարարել կազմել հանձնաժողով, դրանում ընդգրկել հոգեբուժության և հոգեբանության բնագավառների մասնագիտական գիտելիքներով օժտված մասնագետների:

Նույնաբովանդակ գրություն է ուղարկվել նաև ՀՀ առողջապահության նախարարի պաշտոնակատարին:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով փորձագետ նշանակելու համար ներկայացվել են մասնագետներ՝

- ՀՀ ԱՆ կից միջգերատեսչական ստացիոնար դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի նախագահ, հոգեբույժ Սեդրակ Զոհրաբի Թադևոսյանը,
- ՀՀ ԱՆ կից միջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի նախագահ, հոգեբույժ Լուսինե Անդրանիկի Արզումանյանը,
- <<<Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն>> ՓԲԸ, բուժական գծով փոխտնօրեն, հոգեբույժ Արմեն Ռուդոլֆի Հակոբյանը,
- Մ.Հերացու անվան <<ԵՊԲՀ>> հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբան Գայանե Հակոբի Ղազարյանը,
- Մ.Հերացու անվան <<ԵՊԲՀ>> հոգեբանության ամբիոնի դասախոս, հոգեբան Անահիտ Հրանտի Տեր-Ստեփանյանը,
- <<<Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն>> ՓԲԸ ընդունարանի վարիչ, հոգեբույժ Հեղինե Կարապետի Մազմանյանը,
- <<<Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն>> ՓԲԸ հոգեբույժ Ինեսա Ալբերտի Մուրադյանը:

2019թ. հունվարի 29-ին որոշումներ են կայացվել Սեդրակ Զոհրաբի Թադևոսյանին, Լուսինե Անդրանիկի Արզումանյանին, Արմեն Ռուդոլֆի Հակոբյանին, Գայանե Հակոբի Ղազարյանին, Անահիտ Հրանտի Տեր-Ստեփանյանին, Հեղինե Կարապետի Մազմանյանին և Ինեսա Ալբերտի Մուրադյանին փորձագետ նշանակելու մասին:

2019թ. հունվարի 30-ին Շիրակի մարզային քննչական վարչություն է ստացվել 68109718 քրեական գործով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ՝ Ա.Սաքունցի, Ա.Զալյանի և Հ.Հակոբյանի կողմից ներկայացված միջնորդությունը մեղադրյալ Անդրեյ Ռազգիլդեևի նկատմամբ դատահոգեբանական և դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ՝ պարզելու Անդրեյ Ռազգիլդեևի՝ մեղադրյալի հոգեկան վիճակը, այդ թվում՝ մեղսագրվող արարքը կատարելու պահին: Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչները միջնորդել են փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը՝

- Անդրեյ Ռազգիլդեևը մինչև Գյումրիում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմակայան զորակոչվելը տառապել է հոգեկան առողջության հետ կապված որևէ հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի,
- Գյումրիում տեղեկայված ՌԴ 102-րդ ռազմակայան զորակոչվելու պահին Անդրեյ Ռազգիլդեևը տառապել է հոգեկան առողջության հետ կապված որևէ հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի:

Նկատի ունենալով, որ հանցագործությունը կատարելու պահին և դրանից հետո մեղադրյալ Անդրեյ Ռազգիլդեևի հոգեկան վիճակը, ինչպես նաև մի շարք այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության և հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 85-րդ, 243-245-րդ 248-րդ, 249-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 68109718 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված և փորձագետ նշանակված Սեդրակ Զոհրաբի Թադևոսյանի, Լուսինե Անդրանիկի Արզումանյանի, Արմեն Ռուդոլֆի Հակոբյանի, Գայանե Հակոբի Ղազարյանի, Անահիտ Հրանտի Տեր-Ստեփանյանի, Հեղինե Կարապետի Մազմանյանի և Ինեսա Ալբերտի Մուրադյանի կազմով հանձնաժողովին՝ Սեդրակ Զոհրաբի Թադևոսյանի նախագահությամբ:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

1/ Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևը նախկինում և ներկայումս հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ / տառապո՞ւմ է / թե՝ ոչ, եթե այո, ապա՝ երբվանի՞ց և ինչպիսի՞:

2/ Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևը հանցավոր արարքի կատարման պահին ունակ եղե՞լ է ճիշտ կողմնորոշվելու, իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու, թե՝ ոչ:

3/ Եթե Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա վերը նկարագրված հանցավոր արարքը կատարելու պահին այդ հիվանդությունը զրկե՞լ է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ունակությունից:

4/ Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևը հանցագործության կատարման պահին և ներկայումս մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ, եթե անմեղսունակ է, ապա արդյո՞ք ունի հարկադրական բուժման կարիք, թե ոչ, եթե ունի, ապա՝ ի՞նչ տեսակի:

5/ Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևն արդյո՞ք ճիշտ է ընկալել և վերարտադրել քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները, թե ոչ: Հետագայում նա կարո՞ղ էր արդյոք այդ հանգամանքների մասին ճշմարտացի ցուցմունքներ տալ, թե ոչ:

6/ Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևի հարկադրական բուժման համար հակացուցումներ կան, թե ոչ:

7/ Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևը հանցավոր արարքի կատարման պահին գտնվե՞լ է արդյոք, հոգեկան խիստ հուզմունքի (ֆիզիոլոգիական աֆեկտի) վիճակում, թե՝ ոչ:

8/ Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևը հանցավոր արարքի կատարման պահին գտնվե՞լ է արդյոք, այնպիսի հուզական վիճակում (հոգեկան լարվածություն, ֆրուստրացիա, շփոթվածություն, սթրես և այլն), որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա:

9/ Ինչպիսի՞ անհատական-հոգեբանական առանձնահատկություններ ունի Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևը:

10/ Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևին բնորո՞շ են արդյոք այնպիսի անհատական-հոգեբանական առանձնահատկություններ /ինտելեկտուալ, անձնային, հուզակամային, դրդապատճառային և այլն/, որոնք կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակում նրա վարքի վրա:

12/ Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևին բնորո՞շ են այնպիսի անձնային առանձնահատկություններ /բարձր ագրեսիվություն, դաժանություն, անվճռականություն, հարմարվողականություն, բարոյական կողմորոշում, սոցալական դիրքորոշումներ և այլն/, որոնցով պայմանավորվել է նրա հակահիրավական գործողությունը:

13/ Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևի դրդապատճառային (մոտիվացիոն) ոլորտն ի՞նչ առանձնահատկություններ ունի և ինչպե՞ս են դրանք փոխկապակցված քրեական գործի հանգամանքների հետ:

14/ Հաշվի առնելով Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևի անհատական-հոգեբանական առանձնահատկություններն ինչպիսի՞ն է նրա անհատական-դերային կարգավիճակը (լիդեր, ենթակա և այլն):

15/ Անդրեյ Ռազգիլդեևը մինչև Գյումրիում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմակայան զորակոչվելը տառապե՞լ է հոգեկան առողջության հետ կապված որևէ հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի՞,

16/ Գյումրիում տեղեկայված ՌԴ 102-րդ ռազմակայան զորակոչվելու պահին Անդրեյ Ռազգիլդեևը տառապե՞լ է հոգեկան առողջության հետ կապված որևէ հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի՞:

3. Փորձագետներին.

ա/ ներկայացնել մեղադրյալ Անդրեյ Անդեևիչ Ռազգիլդեևին:

բ/ անհրաժեշտության դեպքում՝ փորձագետների պահանջով կտրամադրվի քրեական գործի նյութերը:

4. Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության
երկրորդ դասի խորհրդական՝ Վ.Բ.Սամվելյան